[236534]

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«21» մայիսի 2017թ. N 70-Ա/1

<<ԵՐԵՎԱՆԻ N 1 ՏՈՒՆ-ԻՆՏԵՐՆԱՏ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ /ՆՇԱՆԱԿՄԱՆ/ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի հունվարի 25-ի N 224-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի և Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2006 թվականի փետրվարի 16-ի N 21-Ն հրամանի պահանջներով.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) <<Երևանի N1 տուն-ինտերնատ>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ընտրության (նշանակման) համար հայտարարել բաց մրցույթ՝ 2017 թվականի հունիսի 15-ին, ժամը 11^{00}-ին:
2. Հաստատել մրցույթի անցկացման մասին հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:
3. Նախարարության աշխատակազմի ղեկավարին՝

1) երկու անգամ, հնգօրյա պարբերականությամբ ապահովել սույն հրամանի և մրցույթի անցկացման մասին հայտարարության հրապարակումը՝ նախարարարության պաշտոնական կայքէջում և www.azdarar.am հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում.
2) ապահովել Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2006 թվականի փետրվարի 16-ի N 21-Ն հրամանից բխող անհրաժեշտ միջոցառումները:

4. Անձնակազմի կառավարման բաժնի պետին՝ ապահովել մրցույթին մասնակցելու համար դիմում ներկայացնող քաղաքացիների անձնական գործերի ընդունումը և մրցույթի անցկացման վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը:

Ա. ԱՍԱՏՐՅԱՆ

Հավելված
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի
2017 թվականի ապրիլի 21-ի N 70-Ա/1 հրամանի

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

<<ԵՐԵՎԱՆԻ N 1 ՏՈՒՆ-ԻՆՏԵՐՆԱՏ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ /ՆՇԱՆԱԿՄԱՆ/ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) կողմից տրվում է հայտարարություն <<Երևանի N1 տուն-ինտերնատ>> պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Կազմակերպություն) տնօրենի թափուր պաշտոնում անձի ընտրության (նշանակման) համար: Մրցույթը կանցկացվի 2017 թվականի հունիսի 15-ին ժամը 11^{00}–ին, Կառավարական 3 շենքի 3-րդ հարկում, նախարարության խորհրդակցության սենյակում:

Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն Կազմակերպության տնօրենի պաշտոնում կարող է նշանակվել այն գործունակ չափահաս Հայաստանի Հանրապետության քաղաքացին, ով տիրապետում է գրական հայերենին, ունի բարձրագույն կրթություն, առնվազն մեկ օտար լեզվի իմացություն, ձեռնարկատիրական կամ կառավարման ոլորտի առնվազն երեք տարվա, կամ առնվազն հինգ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, Կազմակերպության տնօրենի պաշտոնի անձնագրով նախատեսված աշխատանքային և մասնագիտական հմտություններ, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի, <<Սոցիալական աջակցության մասին>>, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>>, <<Գնումների մասին>>, <<Հաշվապահական հաշվառման մասին>>, <<Գանձապետական համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքների և այլ իրավական ակտերի իմացություն, համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Մրցույթին մասնակցելու համար դիմումների ընդունման վերջին ժամկետն է 2017 թվականի մայիսի 26-ը:

Մրցույթին մասնակցելու համար հավակնորդները նախարարության աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժին պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

1. դիմում
2. անձնագրի, բարձրագույն կրթության դիպլոմի (արական սեռի անձիք՝ նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի) պատճենները
3. մեկ լուսանկար՝ 3X4 չափի
4. քաղվածք՝ աշխատանքային գրքույկից
5. ինքնակենսագրություն
6. կադրերի հաշվառման անձնական թերթիկ /լրացված/
7. տեղեկանք՝ մշտական բնակության վայրից

8. հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթուղթ/դրանց առկայության դեպքում/
9. բնութագիր՝ վերջին աշխատավայրից /եթե կազմակերպությունը չի լուծարվել/
10. հայտարարություն այն մասին, որ չի տառապում այնպիսի հիվանդությամբ, որը կարող է խոչընդոտ հանդիսանալ պաշտոնում նշանակվելու դեպքում պարտականությունների կատարմանն ու լիազորությունների իրականացմանը:

Քաղաքացին փաստաթղթերի պատճենները բնօրինակների հետ /համեմատելու համար/ ներկայացնում է անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող փաստաթղթով:

Լրացուցիչ տեղեկությունների, ինչպես նաև մրցույթի այլ մանրամասներին տեղեկանալու համար ցանկացողները կարող են դիմել նախարարության աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժին կամ զանգահարել հետևյալ հեռախոսահամարով՝ 58-37-51: